



«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Մամլո հաղորդագրություն

07 սեպտեմբերի, 2011, Երևան

Մրցունակության համաշխարհային զեկույցի համաձայն Հայաստանն իր մրցունակությամբ 92-րդն է աշխարհի 142 երկրների մեջ

Համաշխարհային մրցունակության զեկույցը իր վերլուծություններն ամփոփում է համեմատվող երկրներին դասակարգում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Վերջինս մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից: ՀԱՄ ցուցիչը, հաշվարկվելով մրցունակության 12 հենասյուների հիման վրա, երկրների մրցունակության ամփոփ գնահատական է տալիս:

Վարկանիշերի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների հարցումը տարեկան կտրվածքով իրականացվում է ՄՀԶ-ում ներառված երկրներում՝ ՀՏՖ-ի և Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունների կողմից:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես ՀՏՖ Համաշխարհային մրցունակության և արտադրողականության կենտրոնի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Համաշխարհային մրցունակության զեկույց 2011/12»-ի հիմնական արդյունքները:

2011/12 զեկույցի արդյունքներով Շվեյցարիան շարունակում է պահպանել առաջատարի դիրքը: Մրցունակությամբ առաջին հնգյակում են նաև Սինգապուրը, Շվեդիան, Ֆինլանդիան և ԱՄՆ:

ԱՊՀ տարածաշրջանի (ներառյալ Վրաստանը) երկրների խմբում նախորդ տարվա համեմատ հետընթաց են գրանցել Ղրղզստանը և Ռուսաստանը: Տաջիկստանը, Ուկրաինան և Հայաստանը առավելագույնն են բարելավել իրենց դիրքերը:

ԱՊՀ երկրներ	ՀԱՄ 2011–12 Տեղ	ՀԱՄ 2010–11 Տեղ	Փոփոխություն
Ադրբեջան	55	57	2
Ռուսաստան	66	63	-3
Ղազախստան	72	72	0
Ուկրաինա	82	89	7
Վրաստան	88	93	5
Հայաստան	92	98	6
Մոլդովա	93	94	1
Տաջիկստան	105	116	11
Ղրղզստան	126	121	-5



2011-2012թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ) Հայաստանը 142 երկրների մեջ գրավում է 92-րդ տեղը՝ դիրքը բարելավելով 6 տեղով: Այն պայմանավորված է մրցունակության ցուցիչի հենասյուների մեծ մասի բարելավումներով: Էական առաջընթաց է գրանցվել հաստատությունների, ենթակառուցվածքների, բարձրագույն կրթության և վերապատրաստման, աշխատուժի և ֆինանսական շուկայի, ինչպես նաև տեխնոլոգիական պատրաստվածության ոլորտներում:

Հայաստանի դիրքերը զգալիորեն վատթարացել են մակրոտնտեսական միջավայրի և կայունության առումով:

Հայաստանի մրցունակության հենասյուների փոփոխությունները

ՀԱՄ հենասյուները	ՀԱՄ 2011-12 տեղ 142 երկրների շարքում	ՀԱՄ 2010–11 տեղ 139 երկրների շարքում	Փոփոխություն
Ինստիտուտներ	83	97	+14
Ենթակառուցվածքներ	77	90	+13
Մակրոտնտեսական միջավայր/կայունություն	114	99	-15
Առողջապահություն եւ տարրական կրթություն	94	93	-1
Բարձրագույն կրթություն եւ վերապատրաստում	76	91	+15
Ապրանքների շուկայի արդյունավետություն	108	113	+5
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	34	47	+13
Ֆինանսական շուկայի արդյունավետություն	95	110	+15
Տեխնոլոգիական պատրաստվածություն	88	108	+20
Շուկայի չափ	115	116	+1
Գործարարության կատարելագործվածություն	107	109	+2
Նորարարություն	112	116	+4

Հայաստանի հիմնական մրցակցային առավելություններն են աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու գործելակերպը, գործունեություն սկսելու գործընթացների պարզությունը, ինչպես նաև մալարիայի, հանցագործությունների և ահաբեկչության ազդեցության ցածր մակարդակը, մաքսադրույքների չափը: Այս տարի բջջային կապի բաժանորդների քանակը ներառվել է 10 լավագույն ցուցանիշների կազմում:

Ամենաէական թերությունների շարքին են դասվել մրցակցային այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են մրցակցության դաշտի հետ կապված խնդիրները, մաքսային գործընթացների բեռը, ինչպես նաև բուհ-արդյունաբերություն կապը, պետության կողմից տեխնոլոգիական ապրանքների գնումները, շուկայի չափը, բիզնես կրթության որակը:

Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները

	Ուշագրավ առավելություններ	Վարկանիշ	Ուշագրավ թերություններ	Վարկանիշ
1.	Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա	1	Տեղական մրցակցության ուժգնությունը	139
2.	Մալարիայի դեպքերի քանակը	1	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	138
3.	Ահաբեկչության հետևանքով գործարարության ծախսերը	17	Շուկայում գերիշխող խմբերի առկայությունը	133
4.	Աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու գործելակերպը	18	Մաքսային գործընթացների բեռը	132
5.	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածվածությունը	21	Բիզնես կրթություն (դպրոցների որակ)	131
6.	Աշխատանքից ազատման ծախսերը (շաբաթական աշխատավարձի տեսքով)	21	Արտասահմանյան շուկաների չափի ինդեքս	127
7.	Հանցագործությունների և բռնության հետևանքով գործարարության ծախսերը	25	Բուհ-արդյունաբերություն համագործակցությունը ՀուՄ-ի մեջ	125
8.	Բջջային հեռախոսակապի բաժանորդագրություն	33	Տեխնոլոգիական ապրանքների պետական գնումներ	124
9.	Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործընթացների քանակը	34	Արժեքային շղթայի ընդգրկունությունը	121
10	Մաքսադրույքների չափը	34	Փոքրամասնական բաժնետերերի շահերի պաշտպանություն	120

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ» ընկերությունը «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի բիզնես խորհրդատվական թևն է: «Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Երևան 0051, Հովսեփ Էմին 123
 Հեռ. +37410 219740
 Էլ-փոստ. info@ev.am
www.ev.am